

և զպատճառս կեղծաւորիցի բարեպաշտութեան՝ սիրել և հարստացուցանել զազգայինս իւր, լուրջէ միւս եւս բանին որ մեղմոյն խրատէ, թէ «Մի գիտացէ ձախ քողինչ զործէ աջ քո»²⁴։ Մի ոք իշխեսցէ անամօթ համարձակութեամբ զչարդ զայդ անել պատճառս բարեգործութեան. զի չար է կամակար լրբութիւն քան զմեղանչելն. քանզի եղբայրասպանն Կայէն եւ Գէշգիւ, որ դառն աղահուսիս էր զբաղեալ, քան ընդ մեղացն եւս առաւել վասն անամօթ լրբութեանն կրեցին պատիժ պատուհասից²⁵» (75—76)։

Կը յիշեմ հետեւեալ վայրաժատին տեղիքներն ալ.

Էջ 102. «Օրէն է նաւի դամենայն յինքն ամփոփելով՝ ցամաքաքել յամենայն աշխարհական ծիանաց կարող լինել ապրեցուցանել»։ Բառս ցամաքաքել կ'ենթադրէ դասական մատենագիրներու ընթերցումի ազդեցութիւն։ Հմմտ. Ոսկ. Մատթ. Ա. 142. ընդ բռնութիւն համատարած ծովուն ցամաքաթեւս սլանալ. Ոսկ. Պաւլ. Ա. 262. «Ձամենայն զարմիւք ցամաքաթեւ անցանէր»։ Սեբեք. 60. «Երեք սուրբ ձկունքն ցամաքաթեւ վաղեցին զգործեան»։ — Տեղիքս կը յիշեցնէ կեղծ Ղ. Փարպեցոյ «Եւ յայնմ հետէ ամփոփել զինքն առաքինւոյն յաւեւնայն աշխարհաժողովի գրօսանաց» (էջ 37, տպ. 1904)։

Էջ 119. «Եւ զկատակսն պարարիցէ զօրէն իշխանաց». հմմտ. Ոսկ. Ճառք, 540. «զկատակս բուծանէր եւ զաղքատս չկերակրէր»։

Էջ 117. «Եկեղեցի... ունելով յինքեան նաւապետ կարապետութեան զտեսուչ եպիսկոպոսն, զի խնամոտ եւ արդիւնակատար կամօք անշարժ ունիցի զսահման իւրոյ կարգին»։ Հմմտ. Եւթաղականք, էջ 167. զի ընդելատէր եւ զթասէր, եւ առաւել խնամոտ եւ արդիւնակատար...»։

Էջ 109. «Ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց» կ'ենթադրէ Աղաթանգեղոս,

10 «զեւանաբարչ սողուն». անդ, 925 «զեւանաբարչ խորհուրդ» են։ «Մոմոս» այն է հոպիտ. հացկատակ. հմմտ. Ոսկ. Մատթ. 107, 694 են։
24 Մատթ. 2, 3։
25 Հմմտ. Դ. թաղ. Ե. 23—27. Եւ Շահապիւ վանի ժողովին թ. 2. կան. «Ձոր կաշան առին ընդ Գեկեղսք բորոտի գողօնն համարեցի. անէծք մարգարէին ի վերայ նորս եղեցին»։ «Պատիժ պատուհասից կրել». Եգնիկ 36, 58։

էջ 5 «ի բռնութենէ հարկապահանջ իշխանաց»։

Այս օրինակները ցայտուն կը դնեն մեր առջեւ, թէ որքան ենթարկուած է ճառերու հեղինակը (նաեւ խմբագիրը) Ե. դարու մատենագիրներու ազդեցութեան. եւ զարձեալ թէ որչափ յոգնութիւն յանձն առած է խմբագիրը զբուսած քննութեամբ փայլ տալու եւ անոնց միջոցներուն անդրազոյն ոյժ տալու համար սուրբ Գրոց ճոխութիւնը վկայ կոչելու, յարմար եւ անյարմար վկայութիւններով։

Վերջին պարագան ուշադրութեան արժանի է։ Այս նիւթին չհայող կոչումները հեղինակին զբէ՞ն են, թէ ուրիշ խմբագրէ մը։ Այս կասկածը յանրաւի չէ։ Գիտենք թէ ամբողջ Կանոնագիրքը ենթարկուած է սուրբ Գրքի կոչումներու սիրահարի մը խմբագրութեան, ինչպէս զայս ճիշդ նկատած է Հ. Յ. Տաշեան։ Այս անանուն խմբագիրը ոչ միայն «Վարդապետութիւն Առաքելոց» կանոնական մատենարը ընդլայնած է փոփոխութիւններով եւ յաւելուածներով, այլ եւ բովանդակ Կանոնագիրքը իր հին մասերու մէջ. «ով որ հարեանցի իսկ միայն համեմատէ այժմու հայ Կանոնագրոց մէջ կանոնած օրինակի համար Նիկիոյ, Անկիւրիոյ, Կեսարիոյ, Նէոկեսարիոյ, Կոնստանդնուպոլսոյ եւ Ղաւղաթիկէի կանոնները — ճշգիւ անոնք՝ որոնք ըստ քննութեան Վ. Հ. Յ. Գաթրճեանի հայ Կանոնագրոց այս առաջին խմբագրութեան կը վերաբերին, — կը տեսնէ մի եւ նոյն ձեռքը հոն ալ, մի եւ նոյն յաւելուածներն, փոփոխութիւններն ընելով համարձակ՝ իբր այն թէ բոլորովին անտարբեր գրութիւն մը կը խմբագրէր։ Եւ այս միակերպ փոփոխութիւնք մի եւ նոյն խմբագիրը մատնանիչ կ'ընեն»։ Օրինակներ տուած է Հ. Տաշեան (Վարդ. Առաք., էջ 230—234), որոնք խմբագրին անձին շնորհած յանդուզն համարձակութիւնը կը նշուակեն։

Որչափ ալ աշխատած է հեղինակը դասական մատենագիրներու հանդերձանքով փրեւեւտիլ, բայց նա ներքուստ իր անփառունակ դարուն մատենագիրն է, շարադասութեամբ, ոճաբանութեամբ եւ բառամթերքով։ Այս տեղ պիտի ներկայացնեմ համարաբար մը իր դարուն սեպհական բառերու, զորոնք կիրարկած է զբուսած քննմէջ (ներս կ'անոնեմ նաեւ Ե. հատուածէն)։

ՀԱՄԱՐԱՐԱՍ

Ազգասէր 75	Խեղարարութիւն Ե. 97
Ազգասէր 74, 85	Խնկարկութիւն 81
Ազգասէր 106	Կամաւորական 108
Ամենայնի 126	Կարապետութիւն 116
Անրատանելի 105, 109	Կենցաղ 126
Անընդհատ 85	Կրօնասէր 99
Անդրդուլի 83, 101	Համաստեղ զեկեղեցի 82
Անիգճարար 124	Հանգստարան Ե. 94
Անծախտակ 106	Հարկաւորութեամբ 104
Անկանգնելի 122	Հարստացուցանել 76
Անհնազանդիմ 98	Հրաշալի 104
Անյարար 80, 109	Չայնաւոր 103
Անպարտ 126	Ճառագայթաւ 72
Առաւել(ա)ստացութիւն 74	Ճոռմարանեմ 75
Առասպել (տպ. ասացեալ) 107	Մեղանշահանութիւն 72
Աստուածային. յաճախ	Մկրտատուն 81
Աստուածընկալ 72, 81	Յանդգնարար Ե. 91
Ատենական 82	Յարանամ (յարանամ) 82
Աւանդապատկութիւն 83	Յարմարումն 82, 102
Բարգաւաճել 85	Յաւէտ 114
Բարեկամութիւն Ե. 95	Յոյժ(ած.) 73, 74
Բարեմտութիւն 122	Յորդորութիւն 118
Բարեյարարութիւն 81	Նորածնութիւն 82
Բնաւորապէս 107	Շոպկ 125
Բնագատութիւն Ե. 96	Ուսումնաստաց 84
Գործակալութիւն (գործատուութիւն) 95	Ուսումնաստեցութիւն 88
Դաւարաբարութիւն 126	Պատանախորութիւն 98
Դիտարարութիւն 85, 86	Ջուլի 73
Չանազանիմ 107	Սահմանագրութիւն 33
Չարձանացուցանող 125	Սարսափելի 82
Ըղձունի 72	Սղատահարկութիւն 73, 83
Ժամանակաւոր(ած.) 120	Ստուգանութիւն Ե. 92
Ժողովրդակալ 93	Տարակալի 121
Ինքնասաց 74	Տարամ 83
Իսկապէս 102	Փոյթեռանդն 83
Լրջմտութիւն 98	Քսոմեկի 74

Ասոնք նորարանութիւններ են, որոնք դասական մատենագրաց հաղուագէտ ծառայող երեւան եկան Ե. դարու, Բ. կեսին, եւ զարգացան Զ. ին մէջ։ Հեղինակիս զրեթէ ծանօթ չեն Յունարան Դպրոցի կերտած բաժանիստներն ու բարդութիւնները, որոնք 570էն ետք մուտ գործեցին հայ դրականութեան մէջ։

Ըսի «զրեթէ», վասն զի ունինք երկուրաւ, յարանունարար» (107) եւ առասպելալ (տպ. ասացեալ, 107), որոնք յունարան Դպրոցի կերտած բաժանիստ են։ Բայց ճիշդ այս պատճառաւ ալ կասկածելի են։ Նախապատեթիւնս «Եւ զի միշտ անդր ժողովիմք եւ ապաւէն ապաստանի է մեզ, [զամենայն եւս ապաւէն (տպ. ասացեալ) ի նմա կատարեալսն (տպ. ասացեալ) ի նմա կատարելով, սովորութիւն եղեւ եկեղեցի ա-

նուանել յարանունարար եւ ոչ բնաւորապէս]։ Եւ քանզի բազումք այսպէս կան վկայարանք...» (106—107)։ Այս անկիւնաւոր փակագծի մէջ առնուածը կապ չունի նախորդ նախադասութեան հետ, որ իր շարունակութիւնն ունի էջ 109, տող 3 վարէն. «Նոյնպէս եւ ժողովրդանոցք եւ մատուցեալ...»։ Յարունարար գործածուած է նաեւ էջ 116, որ Զ. հատուածին կը պատկանի, ուստի, ինչպէս պիտի տեսնենք, գրուած է. դարուն։

(Շարունակելի)։ Հ. Ն. ԱՊՆԵՄՆ

ՎԵՍՊՈՒՐԵԿԵՆ - ՎԵՆԻ ՎԵՆՔԵՐՈՒ ՄԵՐՈՒՆ ԸՆԳՆՆՈՒՐ՝ ՁԵՆԵՉԵՆ ՏԵՂԵՎՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՆԱԼԱՆԳԸ ԵՒ ՎԱՆ ՎԻԼԱՅԷԹԸ

Վասպուրականի նահանգը կամ աշխարհը Հայաստանի մեծ նահանգներէն կամ ընդարձակ երկրաբաժիններէն է եւ կը տարածուի «Յարեմտից Պարսկաստանց եւ առերի կործէից» (Ինճիճեան Հ. Ղ., Ստորագրութիւն, էջ 156)։

Վասպուրական հայկական ընդհանուր պետութեան էր բաժնուած՝ կը կազմէր անկախ թագաւորութիւն եւ նոյն իսկ հոգեւորական իշխանութիւն (մեծ մասով) անջատուած՝ անկախ հայրապետութիւն կամ կաթողիկոսութիւն (Աղթամարի)։

Բայց արքայական մականը երկիրն ու ժողովուրդը երկարատեւ խնամելու եւ վատարելու անկարող կ'ըլլայ։ Սենեքերիմ թագաւորն իր հայրենական ժառանգութիւնը Սեբաստիայի հետ փոխանակելու եւ հոն փոխադրուելու կը ստիպուի։

Յարափոփոխ բախտէ յետոյ թրքական լուծին կ'ենթարկուի Վասպուրական, որ նոր կարգադրութեան եւ բաժանումի համաձայն, եթէ մէկ կողմանէ իր հողերէն ու քաղաքներէն կը տուէ, ուրիշ կողմանէ աւելի շատ կը շահի։ Վասն զի Մուշի ու Բաղէշի հետ միացած՝ Վանի տարածուն «Վիլայէթ»ը կը կազմէ։ Եւ այն՝ մինչեւ 1875, երբ միւս երկուքն ի միասին Ռիթ-

լիզի կամ Բաղէշի վիլայէթը կը կացուցանեն:

«Վասպուրական-Վանի վանքերը». մեր ուսումնասիրութեան մէջ նկատի առնուած են այն վանքերը, որոնք (հին) Վասպուրական նահանգի եւ (հին) Վանի վիլայէթի մէջ հիմնուած եւ կառուցուած են եւ ասկէ անոր տիրոջ: Սակայն պարագաներն ու պատճառները ստիպեցին միայն Բաղէշի (Սալնաճորի) վանքերով այս ուսումնասիրութեան մէջ զոհանալ եւ առանձին հետազոտութեան նիւթ ընել Մուշի (Տարօնի) վանքերը: Նախ որ՝ Մուշի վանքերու մասին մեր գրութիւնը շատ ընդարձակ եղաւ եւ երկրորդ՝ վասն զի ան դեռ տպագրութեան լիապէս պատրաստ չէ՝ որովհետեւ քանի մը գրքեր մեր Մատենադարանին մէջ կը պահուին: Բայց մասնաւորապէս կը բաղձայինք անոնց մասին Գեղամ Կարապետեանի ձեռագիր կամ անտիպ գրութիւնները նկատի ունենալու: Թէպէտ մեր թըղթակցութիւններու արդիւնքը այնքան յուսատու չէ, սակայն զուցէ նոր փորձերով հնարաւոր ըլլայ — եթէ զանոնք առջեւ չունենալ — զոնէ անոնց բովանդակութեան ծանօթանալ:

Վասպուրականի իսկական սահմաններու դժուար — ճիշդ դժուար — այնքան դիւրին չէ եւ մեզի համար անհրաժեշտ ալ չէ, վասն զի որ եւ է վանքի մը նկատմամբ Վասպուրականի վանքերու շարքին մէջ, եթէ չենք խօսած՝ մերձաւոր նահանգի մը մենաստաններու վրայ ուսումնասիրութիւն ըրած ատեն՝ զայն նկատի պիտի առնունք:

Վասպուրական դարերու ընթացքին քաղաքական նպաստաւոր պարագաներով ընդարձակուած է եւ աննպաստ ժամանակներու մէջ անձկացած: Բայց համեմատաբար ուրիշ նահանգներու նուազ կորուստով: Մանաւանդ՝ նկատելով աշխարհագրական դիրքը: որով սակայ սմբակներու կոխան եղած եւ աւերուած ու աւարուած: Սակայն ունեցած է կենսատուկ եւ կորովի հայ բնակչութիւն, որ գետցիք է տառապանքներու տակ չկրկն, նոյն իսկ այն օրերուն երբ համարին թագաւորը տնով ու աւագանիով նախնիներու հայրենիքը լքելու սխալ քաղաքականութիւնը կ'ունենայ: Մինչեւ մեծ Եղեռնը Վասպուրական-Վանի

հայ ժողովուրդը ծանր օրերու մէջ արցունք ու արիւն թափած է հին հին կոթողներու եւ հայրենական ժառանգութիւններու վրայ, բայց լաւազոյն օրերու անկիւղէտ եւ անըկուն՝ շինած է մինչեւ այն օրը, երբ այլ եւս անհնար եղաւ հոն ծուարել:

Մ. Խորենացիին ընծայուած (Հայաստանի) աշխարհագրութեան համաձայն՝ (Saint-Martin, Mémoires, II, էջ 362) 37, իսկ Վարդան Աշխարհազրի համանուն գրութեան համեմատ (անդ, էջ 462) 36 հատ են Վասպուրականի գաւառները¹: Վարդան անոնց անունը չի յիշատակեր, որով կարելի չէ ըսել ո՞ր գաւառը կամ անունը զանց առած է, զուցէ եւ միացուցած:

Ահա սոյն գաւառներու անունները՝

- Ռշտունիք,
- Տոսպ,
- Բողունիք,
- Արճիշակովիտ,
- Աղովիտ,
- Կուղանովիտ,
- Դառնի,
- Բալխովիտ,
- Առբերանի,
- Բուժունիք,
- Անոյտոն,
- Անձեւացիք,
- Արտպատունիք
- Երուանթունիք,
- Մարդաստան,
- Արտազ,
- Ակէ,
- Աղբազ մեծ,
- Անձախիճոր,
- Թոռնաւան,
- Ճուաչ,
- Կրճունիք,
- Մեծնունիք,
- Պայունիք,
- Գուկան,
- Աղուանդոտ,
- Պարսպարունիք,
- Արտաշիտան,
- Արտաւանեան,
- Բաքան,

¹ Արդեօք Վարդանի՞ ազդեցութեամբ Մովսէսեան աշխարհագրութեան ձեռագրի մը մէջ եւս 36 նահանգ նշանակուած է (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 163):

- Գարիթեան,
- Գազրիկեան,
- Տանկրիայն,
- Վարաժնունիք,
- Գողթն,
- Նախճաւան,
- Մարանդ,

Ասոնցմէ ոմանց մասին գրեթէ ամենեւին տեղեկութիւն չէ հասած եւ նոյն իսկ կարելի չէ ըսել Վասպուրականի ո՞ր կողմը կը գտնուին եւ ի՞նչ սահմաններով ու տարածութեամբ:

Ասոնց վրայ հարկ է յաւելուլ այն գաւառներն ու նահանգները, որոնք երբեմն Վասպուրական իշխանութեան ու թագաւորութեան եւ Աղթամարեան կաթողիկոսութեան մաս կազմած են եւ կամ Վան վիլայէթի հետ միացած ու ապա բաժնուած:


Յանկալի էր մեզ Վասպուրական-Վանի հակիրճ տեղագրութիւնն ու աշխարհագրութիւնը ներկայացնել հոս: Հարկ եղաւ սակայն այդ ծրագրէն հրաժարիլ: Մեր արդէն ընդարձակ գրութիւնը պէտք չէր աւելի լայնել:

Այս գրութեան մէջ — Վասպուրական-Վանի վանքերու տեղագրութեան եւ պատմութեան մէջ — սա ընթացքը ունեցած ենք: Մտած ենք Բիզնունեայ ծովի մէջ եւ այցելել յետոյ անոր կղզիներու անապատներն ու վանքերը՝ մեր ոտքը Ռշտունեաց գաւառի հողի վրայ ամբացուցած: Անկէ մտած ենք Վան-Տոսպ, Գնունիք ու Առբերունիք. եւ ապա քերած Բիզնունեայ ծովի հիւսիսային եզրերը՝ Արճիշակովիտ, Քաջրերունիք ու Արճիկէ: Ետ գտնալով՝ բարձրացած ենք Նախճաւան ու Գողթն: Ետքէն իջած ենք Անձեւացեաց, Բողունիքի, Երուանդունիքի եւ Աղբազի գաւառները եւ Բիզնունեայ ծովակի հարաւային խորքերը մտնելով՝ Մոկաց, Խիղանի եւ Շատախի երկրամասերը նկատի առած: Հուսկ յետոյ նոյն ծովի արեւելեան կողմն թեւակոխած ենք՝ Սալնաճոր-Բաղէշ: Այսպէս այս վայրերու միաստանները այցելած: Փոխանակ՝ «Վասպուրական-Վանի վանքերը» տիրոջ տալու մեր գրութեան, զուցէ աւելի լաւ խորագիր ընտրած կ'ըլլայինք, եթէ անոր ձևաւորը գրոջմէնք «Բիզնունեայ ծովի եւ անոր մերձաւոր ու հեռաւոր գաւառներու վանքերը»:

ԱՅՍ ԳԱՌԱՌՆԵՐՈՒ ՈՐ ՎԱՅՐԵՐՈՒ ՄԷՋ ԳԱՌՈՒՅՈՒԱԾ ԵՆ ԱՆԱՊԱՏՆԵՐՆ ՈՒ ՎԱՆՔԵՐԸ

Վասպուրականի վանքերու մեծազոյն մասը քաղաքներէ եւ աղմկալից վայրերէ հեռու շինուած են եւ այդ բնական էր ու հետեւողական:

Չափազանց նուազ է թիւը այն վանքերու, որոնք անմիջնորդաբար ժողովուրդին համար հիմնուած ըլլան, այս է անոնց միաբաններու յանձնուած ըլլայ ժողովուրդին կրօնական հողն ու մտաւոր զարգացումը²: Ծանօթ է թէ՛ անոր հողեկան հողածուրթիւնն ու հովանաւորութիւնը (հովուութիւնը) նախապէս գլխաւորաբար ամուսնացած քահանաներու ձեռքն էր եւ



Վարագի վանքը (Վ.Վ.Ս. էջ 268)

ասոնք կամ իրենց անձնական՝ պապենական տան մէջ կը բնակէին ու կամ եկեղեցւոյ մերձ կառուցուած չէնքերու մէջ եւ առաջնորդին — վարդապետին կամ եպիստոսոսին — հրահանգներու համաձայն կոպոսին — հրահանգներու համաձայն իրենց պաշտօնը կը վարէին: Մինչ աւելի շատ է թիւը այն վանքերու, որոնք թէեւ նախ ժողովուրդին հետ գործ չեն ունեցած բայց յետոյ անոր ծառայութեան նուիրուած՝ առաջնորդարան կամ եպիսկոպոստարան եղած: Առաջնորդը հոն կը նստէր եւ ամուրի ու կանամբի քահանաներու հետ ժողովուրդին կրօնական պիտոյքները կը լնուր եւ երբեմն — մանաւանդ վերջին շրջաններուն — ի պաշտօնէ — նմանապէս ջաններուն — ի պաշտօնէ — նմանապէս ջաններուն — ի պաշտօնէ:

² Միւլթար Գօշ կը շեշտէ՝ «Իսկ քահանայից վանականաց ոչ է պարտ ժողովուրդականաց լինել հովիւ, այլ կրօնաւորութեանն, զոր ընկալան՝ պարապսոցին...» (Գառաստանագիրք, էջ 95):

բաղաբազան եւ նիւթական հարցերու եւ խնդիրներու միջամուխ կ'ըլլար: Եպիսկոպոսանիստ վանքերը՝ «մայրաքաղաք» կը կոչուին ինչպէս Վարազի վանքը:

Կան եւ վանքեր, որոնք կանխաւ քահանայատուն եղած են — զխաւորարար կուսակրօններու բնակավայր՝ իջեւան քաղաքներու մէջ եւ ետքէն վանքի վերածուած:

Իսկ վանքերու մեծագոյն տոկոսը անոնց միաբաններու անհատական սրբութեան եւ գիտութեան մշակումի համար կը կանգնուին: Եւ այսպիսի վանքեր ժողովուրդի եւ քաղաքի մերձ ըլլալու անհրաժեշտութիւնը չունին մանաւանդ թէ լաւագոյն՝ անոնցմէ մեկուսացումն ու հեռուութիւնը՝ փորձութիւններու, ցրուածութիւններու եւ համանմաններու դուրս փակելու համար:

Շատ մը վանքեր կ'ըլլան բարեգործական նպատակներու յատկացուած տեղեր՝ հիւրանոց, ուրկանոց, իջեւան եւն:

Ահա այս տեսակէտներու հետեւանքով Հայաստանի (Վասպուրականի) վանքերը քաղաքներէ հեռու, նոյն իսկ դիւղերէ մեկուսի կը բարձրանան: Բայց տարիներու եւ դարերու ընթացքին անոնցմէ շատերը մարդկանէ կը շրջապատուին եւ ինքզինքնին քաղաքներու մերձ եւ մանաւանդ գիւղերու մօտ կը գտնեն: Սակայն՝ մարդը կը սիրէ եկեղեցւոյ ու վանքի շուքին տակ ապրիլ ու գործել: Նաեւ յաճախ վանքի մը ծառայող ընտանիքներու՝ մշակներու բազմանալովն է որ անոր քով (եւ նաեւ՝ ենթակայ) գիւղեր կը կազմուին եւ կը շինան: Եւ վանքը դանձր կը խնամէ եւ անոնք վանքը կը հոգան: Անոնց պահապաններն են վանքի պատերը եւ վանքի պաշտպաններն՝ փոխադարձաբար անոնց բազուկն ու նետը:

Վասպուրականի վանքերու հիմնադիրներն իրենց հիմնարկութիւններն ընելու ժամանակ խոհախնամքն ու շաղկիւր եղած են զանոնք յարմար — ջրով ու օդով, անուղղով ու տեսարանով, ապահովութեամբ եւ երթեւեկի դիւրութեամբ. օժտուած — վայրերու մէջ կանգնելու, որպէս զի միաբաններն անբոյթի եւ անպայթ իրենց նպատակներու կարենային հետամուտ ըլլալ եւ անհանգստութիւններու եւ

դժուարութիւններու հետեւանքով շտառապէին:

Եւ ահա թշնամիներու ոտնձգութիւններէ համեմատաբար աւելի ապահով՝ Բըղնունեայ «ծովամէջ» կղզիներու վրայ կը բարձրանան Լիմի, Կտուցի, Աղթամարի, Առաչրի եւ Յիւլայ վանքերը: Սոյն ծովահին եղերքը կը շարուին Արծուարեր Ս. Աստուածածնի, Զօրայ, Գանձակայ Ս. Թովմասի, Սորբայ Ս. Կարապետի, Շախուրայ, Մատղայ եւ Քարի Ս. Աստուածածնի վանքերը:

Լեռներու՝ սարերու եւ բլուրներու վրայ, ձորերու եւ ձորակներու մէջ կը հիմնուին Լուսապոռուղ Ս. Սահակի, Կարմրակ Ս. Աստուածածնի, Հոգեաց, Մաղարդայ,



Կարմրակայ Ս. Աստուածածին (Վ.Վ.Վ. Ա. էջ 184)

Սարնապատի, Բաղենից, Արտաղի Ս. Թագէտի վանքերը: Գոգթնի Ս. Խաչի վանքը՝ «կատուցեալ կայ ի կատար վայելուչ ձորոցն Վանանդու» (Վ.Վ.Վ. 3, Բ, էջ 726):

Լեռներու ստորտը, կողքին ու լանջքին կը նստին Իլու, Կապուտկողի Ս. Յակոբի, Դիւաբոյնի, Նարեկի (հմ.մ. Արեւելք, 1901, Թ. 4704), Նկարենայ, Զաղար Ս. Նշանի, Երեւնայ, Տէր Յուսկանորդայ, Սբ. Կանանց, Խարաբաստայ եւն եւն վանքերը, իսկ կիրճերու մէջ թաքնուած է Մեծոփի վանքը:

Անմասն ու բանաստեղծական տեսարաններով օժտուած են Մրորսի Ս. Թովմասի (հմ.մ. Արեւելք, 1887, Թ. 952), Գանձակայ Ս. Թովմասի (հմ.մ. Հայրենիք, 1887, Թ. 2257)

3 Այս համաստեղութիւնն է մեր «Վասպուրական-Վանի վանքերը» գրութեան, որուն Ա. մասը 1940ին եւ երկրորդը՝ 1942ին լոյս տեսած են:

նիք, 1887, Թ. 2257) Կարմրաւոր Ս. Աստուածածնի, Խաթուն Տիրամօր եւ Սքանչելադործի վանքերը:

Վանքերը ընդհանրապէս դիւղերու մերձ կամ անոնց մէջ կը կանգնուին: Եւ այսպէս՝ դաշտերով ու արտերով շրջապատուած՝ անոնց միաբաններն (ու անասունները) պարէնի եւ ջրի կողմանէ ապահովուած: Միայն թէ՛ կղզիներու վրայի վանքերը թէ՛ Լրերէ շրջապատուած, բայց հարկաւոր եւ առողջարար ջրէ զրկուած են եւ ջրի հարցով ստէպ մտահոգուած:

3. ԾԵՆՔԵՐ

Այս վայրերու մէջ վանքերու շէնքերը կը բարձրանան տաշուած՝ սրբուած կամ նաեւ անտաշ քարերով եւ աղիւսով: Միայնակ կամ կրկնայարկ կ'ըլլան:

Կ'օժտուին հասարակութեան հայող ըստանմունքներով՝ ինչպիսի են սեղանատուն կամ ճաշարարճ, մատենադարան⁴ եւ միանձնեւոր յատկացուած բնակարաններով՝ սենեակներով կամ խցերով:

Մեծ Անապատի հիմնադիրներու կարգաբաժնիներն են՝ «Սահմանեցին թէ պարտ է անապատաւորաց միայն կալ եւ յուսել ի խցի» (Առ. Դաւ. Պատմ., էջ 256), դարձեալ՝ «Եւ զիսուցս ըստ պատճառի անապատի եւ միայնակեցի՝ նսեմ եւ միջին փոքրաբոյն» (անդ էջ 252): Այդ որոշումի համեմատ Լիմի ու Կտուցի սենեակները կիսամութ եւ պղտիկ էին⁵ եւ ոմանց պատուհանները դէպի նրբանցք բացուած, որպէս զի աշխարհի հետ ամէն կապ խզուէր (Վ.Վ.Վ. Ա., էջ 7, 55):

Բնական է սենեակներու թիւը միաբաններու եւ ուխտաւորներու համաձայն եղած է⁶ (Արեւելք, 1901, Թ. 4774, 4785):


4 Հաղբատի մատենադարանին մասին հմ.մ. Յովսէփեան Գար. արքեպ. Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակութի պատմութեան, Ա. Պրակ, Երուսաղէմ 1935, էջ 70:

5 Լիմի «Գրտի տուն» ընակարաններն աւելի լաւ էին (հմ.մ. Վ.Վ.Վ. Ա., էջ 7, ուր «Լեռներ» թանկիքն ըլլալու է 1901, Թ. 4774): Նմանապէս Աղտակիքն ըլլալու է 1901, Թ. 446): Կտուցի թանկիքն է 1902—1903 եւ Սուրճանդակ, 1900, Թ. 446) ինչպէս եւ Ս. Թովմասի վանքի սենեակները (հմ.մ. Հայրենիք, 1887, Թ. 2257):

6 Գրեթէ բոլոր վանքերը կ'ունենան արտադրած, փարսի, շաւարան, համարանոց եւն եւն:

Սահման վանք կ'ունենայ եկեղեցի մը, մատուռ մը, զանգակատուն, ժամատուն, դարպաս⁷: Պակաս չեն վանքեր, որոնք քանի մը եկեղեցիով կամ մատուռով կ'օժտուին:

Եկեղեցիները կը շինուին կամ սրբատաշ՝ կոփածոյ քարերով — երբեմն եւ կոշտ՝ անտաշ քարերով — եւ թէ՛ ցանցառ՝ կամ թրծուած եւ կամ հում աղիւսով: Շատ ստէպ ճարտար ձեռքի մուրճի



Մաղարդայ նախապիկայի վանքի դուրը (Վ.Վ.Վ. Բ. էջ 527)


հարուածներու տակ քարերը կը դարձան զանազան ձեւերով ու կերպարանքներով: Յատուկ ուշադրութեան առարկայ կ'ըլլան դռները — զարդի եւ նիւթի կողմանէ: Դռներու մօտ եւ շուրջը գտնուած քարերու — ինչպէս եւ այլուր — կը գրուին արձանագրութիւններ, որոնք եկեղեցւոյ եւ վանքի շինութեան, վերականգնումի, նուիրատութեան պատմու-

7 Արտաղի Ս. Թագէտի զանգակատունն ու անոր զանազան մասերը տեսնել՝ Աստուածատուրեան Ս. Վ. Պատկերացոյց, հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռայ Ս. Էջմիածնի եւ յրջակայից՝ Վաղարշապատ, 1910, Պրակ Ա., էջ 10 եւ Թ. 9—12:

թիւնն է որ այցելուին կը հաղորդեն եւ անոր ազօթքը կը խնդրեն: Ամէն եկեղեցի բաց ի մեծ կամ աւագ դռնէն կ'ունենայ դեռ նուազագոյն ուրիշ մը եւս՝ մուտքի եւ ելքի զիւրութեան եւ դժբախտ պարագաներու մէջ — ինչպէս հրդեհի եւ յարձակումի ատեն — փախուստի միջոց տալու համար:

Վասպուրականի մէջ սակաւաթիւ են վանքերու եկեղեցիները, որոնք գմբէթ ու կաթուղիկէ չունենան:

Գուրգուրանքի եւ ճաշակի առարկայ կ'ըլլայ եկեղեցւոյ ներքինը որ անոր էական



Նոյնը հայկական եկեղեցւոյ շէնքի (Յիպնայ Ս. Աստուածածնի եկեղեցին՝ Վ.Վ.Վ. Բ. էջ 732)

ու կարևոր մասը կը կազմէ: Ամէն եկեղեցի կ'ունենայ մէկէ աւելի խորան՝ սեղան, պահարան՝ խորհրդարան, զարպաս՝ դաւիթ: Աւագ խորանը զարդարանքի եւ նկարի առաւելութիւններով կը գերազանցէ միւս կամ կողմնակի խորանները: Ինչպէս այս վերջինները, նմանապէս պատերը ստէպ գեղեցիկ նկարներով կը զարդարուին:

Արեւի լոյսը եկեղեցին կը մտնէ՝ կը թափանցէ լուսամուտներով՝ պատուհաններով, որոնք կը շինուին կամ կը բացուին կաթուղիկէին եւ պատերու վրայ: Նախագաս կը համարուի եկեղեցին խորհրդաւոր մթութեան մէջ շարժելու եւ խաւարը աշտանակներու եւ ջահերու մոմերով կամ իւզալից կանթեղներու լոյսով ու շողով մերթելի՝:

⁸ Մեր վանականները հայ պետութեան անկումէն ետք նահատակի կեանքը ապրեցան. Հայաստանի վրայ արշաւող թշնամին նախ վանքերը կը թալանէր... (Տաթև, տարեգրք, 1927, էջ 181): Հայկական վանքերու եւ եկեղեցիներու շէնքերու (ճարտարապետութեան) մասին ընդարձակօրէն համեմատել:

Եկեղեցւոյ զարդերէն ու ամբողջութեաներէն են սիւները, դանազան նիւթերով շինուած: Նաեւ քանդակներով՝⁹ եւ խոյակներով հարուստ ու ճոխ:

1. Strzygowski Prof. Dr. Josef, Die Baukunst der Armenier und Europa, 1918, Wien, 2 հատոր:
2. Schwiager Dr. J., Neue Wege zur Erforschung von Ursprungsfragen altarmenischer Kirchenbauten ի Հանդ. Ամսօր. 1927, էջ 946—980:

3. Տէր Մովսէսեան Մագիստրոս Մերոպ Արքեպ. — Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դատի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ 1938: Իսկ վանքերու մասին դանազան տեսակէտներով գրութիւններ եւ յօդուածներ ունին՝

1. Կոստանեան Կ.՝ — Հայոց վանքերը, Մոսկով 1883:

2. Շահաղիզ Ե.՝ — Հայոց վանքերը եւ նրանց գերը Հայոց կեանքում, ի «Վտակ», գրական բանասիրական ժողովածու Գր. Ջանչեանի յիշատակին, Թիֆլիս 1901, էջ 255—302:

3. Macler Fr., Les couvents arméniens, արտատպ. ի Revue de l'histoire des Religions, tome LXXIII, Paris 1916.

4. Topdschian H., Die Anfänge des armenischen Mönchtums mit Quellenkritik, արտատպ ի Zeitschrift für Kirchengeschichte, XXV. Band, I. Heft, համառոտում «Որո» ի մէջ 1906, էջ 360, 468 եւ 538:

5. Յուսիկ եպ.՝ — Անապատականներ եւ վանականութիւն, նախ «Արարատ» ի մէջ (1905—1906 հրատարակուած եւ ապա արտատպուած):

6. Ինճիճեան Հ.՝ Ղ.՝ Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ 1835, Գ. հտր., էջ 204—217, զարձեալ՝ Մտորարութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ 1822 եւ Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի մասին Ա., Հտր. Ա. (Նոր Հայաստան) Վենետիկ 1806:

7. Ալիշան Հ.՝ Ղ.՝ Այրարատ, Վենետիկ, Սիսական, Վենետիկ, Սիսուան, Վենետիկ, Երբակ, Վենետիկ, Հայապատում, Վենետիկ:

8. Պալեան Տ. եպ.՝ Հայ վանքայր ի թուրքա մասն Ա., Իզմիր, 1914 եւ «Բիւզանդիան» թերթի մէջ շատ մը յօդուածներ, ինչպէս եւ «Մաղիկ» ի մէջ (1899, Թ. 78—79):

9. Ասատուր Հր. — «Մասիս» ի մէջ, 1892, Թ. 3930, էջ 75 Թ. 3962, էջ 109, Թ. 3966, էջ 173:

10. Նահապետեան, Նարեան, Լեւոնեան եւ ուրիշներ «Հայրենիք» ի, «Արեւիկ» ի, եւ «Բիւզանդիան» ի մէջ Վասպուրականի վանքերու մասին ցերեցան յօդուածներ ունին:

11. Մարգրիտեան Հ. Ն. — Տեղագրութիւնք ի Փոքր եւ Մեծ Հայս, Վենետիկ 1864: Լալայեանց Ե. — «Ազգագրական Հանդէս» մէջ բազմաթիւ գրութիւններ, Վասպուրականի վանքերու մասին յատուկէն հմտ. 1910 եւ 1911:

14. Պատուրեան Հ. Մ. — ի «Տաթև», տարեցոյց 1927, էջ 178—188:

15. Կարելի էր դեռ անուններ ու տեղիքներ շարել, սակայն այս գրութեան համար պարտաւորաւոր կը համարուին: Բաց դեռ հարկ է յիշել՝ Գեորգ Եչքեցի «Արարալայրեր, տեղագրութիւն Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանքերից եւ ուսումնարանաց», Թիֆլիս 1902, եւ Սրուանձտեանցի («Թորոս աղբար», «Համով հոտով»), Միւրախորեանի (Նկարագրական ուղեւորութիւն) եւ Ա. Գոյի («Վանի-Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները») գրութիւնները:

⁹ Այլթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ քանդակներու մասին հմտ. Հայաստանեայց եկեղեցի, 1943, էջ 72—79 (Սիրարփի Տէր Ներսէսեան):

Վանքերն ու եկեղեցիները կը շրջապատուին քարաշէն պարիսպներով՝ միաբաններու խաղաղութիւնն ապահովելու, անոնց դոյքերն ու հարստութիւնները գող ու յափշտակող Երկար մատերէ գերծ պահելու, զարձեալ թշնամիներու ասպատակութիւններու դէմ թուժը կանգնելու ծրարով: Կային վանքեր, որոնք գետնի տակ նկուղներ եւ դաղտնի ճամբաներ ունէին — նոյն նպատակով:

4. ՎԱՍՊՈՒՐԱՎԱՆԻ ՎԱՆՔԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ԿՍՄ ՍԿՋԲՆԱՍՈՐՈՒԹԻՒՆԸ

Առանձին ուսումնասիրութեան նիւթ պիտի ընենք Հայաստան եւ արտասահմանի մէջ կանգնուած վանքերու սկզբնաւորութիւնը, անոնց արտաքինը (չէնք ու շրջակայք) եւ ներքինը (կանոնադրութիւն, սովորութիւն, արժէք ու արժանիք, նաեւ ապարժանիք, հակիրճ՝ կեանք ու դործունէութիւն), իսկ հոս նոյն հարցերը կը շօշափուին լոկ Վասպուրականի վանքերու նկատմամբ եւ այն ոչ՝ սպառիչ, վան զի մաս մը ակնարկուած ուսումնասիրութեան մէջ նկատի պիտի առնուի — հետեւաբար՝ խուսափումն կրկնութեան: Սակայն այս առթիւ հզանցիկ ակնարկի առարկայ պիտի ըլլան հայ վանքն ու վանականութիւնը՝ լուսաւորութեան եւ համեմատութեան համար:

Վասպուրականի վանքերու հիմնադիրներ նկատուած են առաքելները: Աւանդութեան համաձայն Ս. Թադէոս կը դրութեան համաձայն Ս. Թադէոս կը կանգնէ՝ Ս. Խաչի (Վ.Վ.Վ. Ա. էջ 234), Կարմրաւոր Ս. Աստուածածնի (անդ՝ էջ 241) կարմրաւոր Ս. Աստուածածնի (անդ, էջ 354), Գամաղիէլի (Հանդ. Ամս. 1943, էջ 78) վանքերը: Ս. Բարթոլոմէոսի ձեռքով վանքերը կը հռչակուին Նախավայրի (անդ, Բ. էջ 533), Ազուլիսի Ս. Թովմասի (անդ, էջ 686), Հոգեաց (Հանդ. Ամս. 1942, էջ 174) վանքերը:

Հ. Հայունի «Հայաստանեայց եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորչէն՝ յառաջ» իր գրութեան մէջ կ'եզրակացնէ ու կը հաստատէ՝ «Ստուղիցիներ փաստօրէն, որ առաջինը անձինք՝ Յուզա-Թադէոս եւ Բարթոլոմէոս ոտք չեն կոխած Հայաստան» (Բազմ. 1927, էջ 40): Այլուր գեռ կը

գրէ «Անրնդունելի է ինձ նաեւ կուսանոցի մը հաստատութիւնը Բարթոլոմէոսի ձեռքով: Վասն զի Գ. դարէն յառաջ կուսաստանի գաղափարն իսկ գոյութիւն չունէր քրիստոնէութեան մէջ, թող թէ Հայոց. եւ անոր առաջին հիմնադիրն եղաւ Ս. Անտոն, որ սկիզբ տուաւ վանական համախումբ կենսակցութեան, ինչպէս փաստերով հաստատած եմ այլուր» (Բազմ. 1927, էջ 39, հմտ. գեռ՝ անդ. 1923, էջ 13):

Հետեւաբար աւելորդ է այս հարցի վրայ ծանրանալ, մանաւանդ նկատելով աղբիւրները, որոնք կասկածելի են եւ վերջին շրջաններու դործեր եւ պատմութեան անհամընթաց:

Հայաստանի վանքերու — անոնց մէջ Վասպուրականի վանքերէն ոմանց՝ Լիմի Վ.Վ.Վ. Ա., էջ 8), Կառուցի (Ա., էջ 56 եւ 61), Սորբայ Ս. Կարապետի (Ա., էջ 81 եւ 183), Սալնապատի Ս. Գրիգորի (Ա., էջ 262), Վարդի (Ա., էջ 280), Եւն Եւն — Հիմնադիր նկատուած է Գրիգոր Լուսաւորիչ: Նա՝ որ քրիստոնէական հաւատքը Հայաստանի մէջ տարածեց, որ եկեղեցական նուիրապետութիւն կազմեց, կ'ենթադրուէր, որ այդ շրջաններուն փթթիլ ու ծաղկիլ սկսող վանականութիւնը նկատուողութեան առնուր: Ինքնին հետամուտ է ճգնողական կեանքի. «Եւ ինքն ժամանակ յուսուած է Գրիգոր Լուսաւորչէն, որ ինքեան իւրով անձամբ իսկ օրինակ ցուցանէր (Ազաթանդեղոս, քնն. հրտ. էջ 442, հմտ. եւ էջ 443) եւ հետեւորդները կը քաջալերէ՝ «Առեալ հետեւորդները կը քաջալերէ՝ «Առեալ դամանս ոմանս յաշակերտաց իւրաքանչիւր մենաստանաց երթեալ» (անդ, էջ 444), «Եւ դարձեալ բազում եւ անհամար գունդս գունդս վանականաց ի շէնս եւ յանշէնս, դաշտականս, շինականս եւ լեռնականս անձաւամբուս եւ արգելականս հաստատէր» (Ազաթ., էջ 441, 443, 448—451, հմտ. եւ Չենոր Գլակ, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889, էջ 20—24):

Կարելի է համաժխտ ըլլալ Գրիգոր Լուսաւորչի նկատմամբ Յ. Թովչեանի արտայայտութեան՝ «Ինչպէս մէկ կողմանէ անկարելի էր որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ¹⁰ վանք

¹⁰ Նոյնը կ'արժէ Տրդատի մասին, որ Եփեսոսի Ս. Խաչը հիմնած կ'ըլլայ հմտ. Հանդ. Ամս. 1943, էջ 83: Նաեւ՝ Հովիթիանց հիմնադրութիւններու մասին,

իրողութիւն կը մնայ թէ՛ այդ նահանգի վանքերու մեծամասնութիւնը եկեղեցական դասին ձեռնբեկութեամբ ու ժողովուրդին նպաստներով ու նուէրներով կառուցուած ու պահպանուած է: Մանաւանդ ժ.Գ.—ԺԵ. դարերուն վասպուրականի վանքերու շինութեան եւ պայծառութեան մեծապէս փոյթ կը տարուի: Անոնց մէջ կը ծաղկին նշանաւոր եկեղեցականներ եւ մատենագիրներ: Հոգեաց, Սալնապատի եւ Մեծոփի վանքերը շանթաձիգ կ'ըլլան եւ բաղմաթիւ միաբաններով կը խայտան: Սակայն անոնց եւ անոնց հետ ուրիշ վանքեր՝ «Վասն բազում հինից թշնամեաց եկելոց ի վերայ եւ վրդովմանց եւ աւերանաց աշխարհիս Հայոց ամենեւին բնաջինջ եղեալ էր եւ բարձեալ նշոյլ եւ նշմարան առաքինութեան գործոց եւ բարի կարգաց յաշխարհէս Հայոց...», «...Եւ ոչ գոյր ի ժամանակին յայնմիկ անապատ եւ կամ գիտող վանական կենաց» (Առ. Դաւիթ. Պատմ., էջ 150—151):

Այս տխուր պատկերը Սարգիս Եպիսկոպոսի աչքերուն կը ներկայանայ եւ անիկա կ'ուզէ հայկական վանքերը եւ անոնց նուազաթիւ միաբանները անկաճութենէ հանել՝ բարձրացնել: Եւ ահա համակարծիք ու աշակից կ'ունենայ Կիրակոս Տրապիզոնցին, որուն հետ ծրագիր կը մշակէ եւ գործի կը սկսին անյապաղ: Միասին՝ «Տեղի անբոյթ եւ պատշաճաւոր անապատի» կը փնտռեն եւ անոնց աչքերը Սիւնիքի վրայ կը յառնեն: Կայցեղին Տաթև, Զորոյ վանք, Թանահատի վանք՝ Մինչեւ գտին գտեղին, յորում այժմ շինեալ կայ Մեծն անապատն եւ անդ շինեցին եկեղեցի եւ գիւղոցս ըստ պատշաճի անապատի եւ միայնակեցի (անդ, էջ 252 18):

Անոնց ընտիր գործունէութեան աւետիսն ու համբաւը բերնէ բերան Հայաստանի քաղաքներն ու գիւղերը տարածուելով՝ բաղմաթիւ կարող անձեր ամէն անկիւնէ հոն կը գիմեն՝ կը խուժեն՝ «Ոչ միայն աշխարհականք եւ աննշան —, այլ եւ եկեղեցականք եւ անուանի արք, վարդապետք, եպիսկոպոսք եւ քահանայք» (անդ, էջ 253):

Անոնց խումբի մէջ կը տեսնուի Ներսէս Մոկացի՝ «Որ աստ վարժեալ ուսաւ... զվարս կրօնաւորական եւ երեալ զնաց ի գաւառն վասպուրական» (անդ, էջ 254): Լիմի մէջ կը հաստատուի՝ «Եւ անդ ժողովեցան

առ նա բաղմութիւնք եղբարց եւ եղեւ անապատ հաստատուն ամենայն կարգօք եւ կրօնիւք միակեցութեան վարուց» (անդ, էջ 254): Անոր յաջորդին՝ Ստեփանոսի օրով վանականներու թիւը չափազանց կ'աճի եւ «Ոմանք ելեալ ի Լմայ զնացին ի տեղին, որ անուանի Կտուց... եւ անդ եւս շինեցին անապատ եւ եղբայրանոց եւ է այժմ հաստատուն ամենայն կրօնաւորական կարգօք» (անդ, էջ 254):

Վասպուրականի մէջ վանական կեանքի վերելքի ու ծաղկումի վերջին շրջանն է այս. անկէ վերջ՝ վայրէջք, կործանում եւ աւերում:

6. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՎԱՆՔԵՐՈՒ ԵՒ ԱՆՈՆՑ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԹԻՒՐ

Ստուգապէս կարելի չէ ըսել թէ՛ Վասպուրականի¹⁹ մէջ քանի՞ վանք կար: Հ. Ինճիճեան կը գրէ՝ «Զթիւ մենաստանաց ի Յայսմաւուրս Փետրուար 27 դտանեմք 900, իսկ ի Յունիս 11 դտանեմք ձժԵ, այլ որպէս անդէն ոմանք այսպէս գնէին եւ ոմանք այնպէս, ըստ որում ձժԵ էին մեծամեծք վանօրայք, իսկ մնացեալքն փոքր եւ ի սակաւուց բնակեալ» (Ստորագրութիւն, էջ 160): Մեր Մատենադարանի Թ. 213, Թ. 214 եւ Թ. 701 Ձեռագիրներն ունին «Թձ վանքս» կամ «Ինն ձ. վանք» (Հանդ. Ամս., 1940, էջ 217—218): Իսկ Թիւ 10 կը վկայէ «Քանդի զվանօրայսն (Սենեքերիմ) ոչ ետ կայսերն եւ ոչ էստ փոխարէն վանորէիցն, այլ եթող զվանօրայսն ազատ... որք էին ձ. եւ ժե. վանք եւ յայլոց Թձ. ասի եւ յերաւի զի ձ. եւ ժե. մեծ վանօրայք էին, որք անուանիք էին եւ թոշակաւորքն եւ Ջ.՝ փոքր եւ սակաւամարդ²⁰» (Տաշեան, Մայր Յուցակ, էջ 100):

¹⁹ Միեթար Երեցեան «Մշակի մէջ 1938ին (Թ. 1208) հարց դրած է «Մեջու համար Վանի նահանգին մէջ աւելի վանքեր եւ մենաստաններ կային քան թէ հայկական ուրիշ նահանգներու»: Համառոտ պատասխանն է.
ա. Որովհետեւ Վասպուրական-Վան Հայաստանի ընդարձակագոյն եւ բաղմամարդ նահանգներէն է:
բ. Վասպուրականի թաղաւորներն, եկեղեցական նուիրապետութիւնն ու ժողովուրդը աւելի եռանդուն եղած են եւ ուշադիր այս կէտին:
գ. Սոյն նահանգը նիւթապէս աւելի հարուստ էր համեմատաբար աւելի ազատ ու հանդիստ ժամանակ ըստ որում է:
²⁰ Այս վանքերն ամէնն ալ իսկական վանքեր չէին, այլ եկեղեցիներ քահանայատներով: Գեռ միջին ապօր ժողովուրդը վանք կամ մենաստան բառերով եկեղեցի կը հասկընայ:

¹⁸ Հմմտ. Ալիշան, Հայաստանում, փոքրագիր, Գ, էջ 341—355, հմմտ. եւ Archiv der hl. Kongregation der Propaganda, հտր. ձՁԹ., էջ 258—259:

Սմբատ Գունդստապլ կը գրէ՝ «(Սենեքերիմ) չորս հարիւր վանօրայս ոչ ետ, այլ պահեաց իւր աղօթարարս... եւ հարիւր հնդեասան վանք այլ ետ» (Պատմութիւն, Մոսկուա 1856, էջ 27—28): Այսպէս Սմբատ վանքերու թիւը զգալիօրէն կը նուազեցնէ եւ որ դեռ այնքան սակաւ չէ: Յետոյ վանքերը աննպաստ պարտղաներու հետեւանքով շատ կը տուժեն ու կը նուաղին: Վերջին շրջաններուն 51—56 վանք կարելի էր յիշատակել (Մաղիկ, 1867, Թ. 813 եւ Արեւել. Մամուլ, 1879, էջ 368):


Վասպուրականի այս վանքերէ ոմանք շատ անդամներ ունէին իրենց պատերու մէջ: Նարեկ «բաղմամարդ» էր (Վ.Վ.Վ., Ա., էջ 195), Լիմ, 50—70 միաբան ունէր (անդ, էջ 20—21, 24, 27, 45—46), Կտուց «քաղաք բաղմամտողով» էր (անդ, էջ 57 եւ 57), Իլու վանքը՝ «Տոխ միաբանիւք» (անդ, էջ 160—161), Կապուտկողի մէջ «քան զերեք հարիւր արեղայ եղեալ է» (անդ, էջ 167—168): Ծատ միաբան ունեցեր են նաեւ Միանձն վանքը, դարձեալ Վարազի, Արտազի Ս. Թաղէոսի, Մաղարգայ, Ագուլիսի, Նկարենայ Ս. Ստեփանոսի, Չաղար Ս. Նշանի եւ Մահաշատի Ս. Պետրոսի վանքերը:

7. ԱՒԱՆՎՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՎԱՆՔԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Վասպուրականի վանքերու շատերուն անուան կամ պատմութեան — մանաւանդ հիմնարկութեան՝ հետ բարեպաշտիկ՝ սիրուն աւանդութիւն մը հիւսուած է եւ անով կամ անոր անունը մեկնաբանուած եւ կամ համբաւը հռչակուած՝ ժողովուրդի սրտին մէջ՝ առարկայ եղող վանքին հանդէպ աւելի խոր սէր ու սերտ համակրանք ստեղծելու եւ արծարծելու զիտումով:

Ահա Բղնունեաց ծովի վանքերէն մէկուն մէջ երեք միաբան կը հիւանդանան ու կը մեռնին եւ «կուտուց հրեշտակ իջեալ էին» ու աւատիկ՝ «Վասն այսօրիկ կոչեցաւ անուն տեղոյս Կուտուցու անապատ» (Վ.Վ.Վ., Ա., էջ 57): Վոշիկ աղնուական Թամար անուն աննման սիրուն աղջիկին կը սիրահարուի եւ երբ ասիկա ծովամոյն կ'ըլլայ «Ա՛խ, Թաւրք ասիկա ծովամոյն կ'ըլլայ ջրերու մէջ մար» հեծեծելով նա ինքզինքը ջրերու մէջ կը խորատուզէ եւ կղզիին ու վանքին առջ նուրը Աղթամար կը կնքուի, թէեւ Ս. Խաչ է վանքին իսկական անունը (Վ.Վ.Վ., Ա.,

էջ 87): Գրիգոր Նարեկացին «առ Տէր» կը փութայ եւ կղզեակն ու վանքը «Առտէր» կը յորջորջուին: — Լուսապտուղ Ս. Սահակի վանքը այդպէս կոչուած է, վասն զի միականին Սահակ Տիրամօրմէն աչքի լոյս կը ստանայ (անդ, էջ 157): — Ս. Կոյս՝ «կարմրաղբեստ փառօք» Թաղէոս առաքեալին կը հրամայէ՝ «անուանեա զանուն տաճարին Կարմրաւոր»: Հրամանը կը կատարուի (հմմտ. Կարմրաւոր Ս. Աստուածածնի վանքը՝ անդ, էջ 237—238): — Պատրիկի կամ Եղիշէի վանքը «կոչուում է Չարահան կամ տաճկերէն Չաղրը Ս. Նշան, որովհետեւ



Կտաց անապատ ի Ս. Կարապետ եկեղեցին (Վ.Վ.Վ. Ա. էջ 51)

տեւ «զիպուածով մի այլապի զիւհասար բժշկուել է այնտեղ» (Աղանեսանց, Դիւան, Ժ., էջ 548. հմմտ. Վ.Վ.Վ., Ա., էջ 209):

Սպիտակ վանքը այդ անունը կը ժառանգէ, վասն զի Լեւիթիմուրի սեւամորթ զինուորը անոր եկեղեցւոյն դուրս բռնաւորին հրամանովը ջախջախել ուզած ժամանակ՝ յանկարծ սպիտակամորթ կը դառնայ եւ այլադանանը «վանքը կ'աղատէ աւրուելէն» (Բիւրանդիոն, 1900, Թ. 1999, Վ.Վ.Վ., Ա., էջ 218):

Կուունի Ս. Աստուածածնի վանքը իր այդ յորջորջումը գոյգ զէպքերու կը պարտի եղեր: Կուունի մը Ս. Պատարալի զինիին պակասը կը լեցնէ ողկոյղ մը բերելով, դարձեալ կոունիկ մը հնձուորները թունաւորումէ կը փրկէ իջնայով կաթսայի մը մէջ, ուր թղնաւոր օձ մը ինկած էր (Արժուի Վասպ. 1859, էջ 59 եւն):

Բագենից վանքը էջմիածին կը կոչուի. վասն զի միաբանները՝ ճգնաւորները

